



«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» 03 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի պետի ժ/պ
 Լ. Թունյան

N ԳԲԽ 08/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Անտարես» ՍՊԸ-ի կողմից 03.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Անտարես» ՍՊԸ-ն հայտնել է, որ 18.02.2014թ. դիմում է ներկայացրել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգի 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժիններին մասնակցելու համար:

Դիմումին կից ներկայացվել են թվով չորս գնային առաջարկ և գնային առաջարկների մեջ տեղի է ունեցել վրիպում՝ գները ներկայացվել են մեկ միավորի համար, այլ ոչ թե ամբողջ պայմանագրի կատարման համար:

«Անտարես» ՍՊԸ-ն հայտնել է, որ վրիպակի մասին ընկերությունը իմացել է 18.02.2014թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից և նույն օրը գրավոր դիմում է ներկայացրել վերջինիս աշխատակազմի ղեկավարին՝ հայտնելով տեղի ունեցած վրիպակի մասին:

«Անտարես» ՍՊԸ-ն նույն օրը՝ 18.02.2014թ., գրավոր դիմել է նաև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ հայտնելով, որ գնային առաջարկների մեջ տեղի է ունեցել վրիպում և խնդրել է գնահատման ընթացակարգում հաշվի առնել այդ տեղեկությունը:

«Անտարես» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերության իրավաբանը 18.02.2014թ. հեռախոսազրույց է ունեցել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավաբանական բաժնի իրավաբանների հետ, և վերջիններս հայտնել են, որ եթե վրիպակ է տեղի ունեցել գնային առաջարկների մեջ, ապա այդ հայտերը չեն ուսումնասիրվի և կհանվեն, որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր, սակայն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 25.02.2013թ. գրությամբ հայտնել է, որ «Անտարես» ՍՊԸ-ի հայտնած տեղեկությունը չի կարող հաշվի առնվել:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները, յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն, նախքան պայմանագրի կնքումը, բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Համաձայն նույն օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում, իսկ 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ չգերազանցող գնումների դեպքում՝ առնվազն 5 օրացուցային օր:

Գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու մասին որոշումը կայացվել է 2014թ. փետրվարի 26-ին:

«Անտարես» ՍՊԸ-ն համաձայն չէ որոշման 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների հետ և ղեկավարվելով վերոնշյալ իրավական նորմերի դրույթներով՝ ներկայացրել է բողոք:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 5.1 հավելվածով սահմանվել է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

Համադրելով վերոնշյալ իրավական նորմը և հրավերի մեջ համապատասխան նշված գնային առաջարկի վերաբերյալ պահանջը՝ «Անտարես» ՍՊԸ-ն եզրահանգում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հայտի մեջ գնային առաջարկը նշված լինի ոչ ամբողջ պայմանագրի կատարման համար սահմանված գումարով, ապա այդ հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեն անբավարար և մերժվեն:

«Անտարես» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկներից, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացված դիմումներից պարզ է դառնում, որ «Անտարես» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել է ոչ թե հրավերում նշված պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, այլ լրիվ այլ թվով՝ նշված ապրանքների մեկ միավորի արժեքի չափով:

Բացի այդ, որ «Անտարես» ՍՊԸ-ն գրավոր տեղեկացրել է այդ մասին գնահատող հանձնաժողովին, նշվածի վառ ապացույց է հանդիսանում նաև ներկայացված գնային առաջարկների պարզ համադրումը միմյանց հետ: Օրինակ, 18-րդ չափաբաժնով ներկայացված հայտերում մի դեպքում գնային առաջարկը ներկայացվել է 90.833 ՀՀ դրամ, մյուս դեպքում՝ 91.666 ՀՀ դրամ, իսկ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում նշված էր 204 ՀՀ դրամ, այսինքն՝

մոտ 450 անգամ ավելի փոքր գումար, ինչն ակնհայտորեն պետք է գնահատվեր որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտ:

«Անտարես» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերության կողմից նշվածի մեջ համոզվելու համար բավական կլիներ ուղղակի բաժանել մյուս մասնակիցների կողմից ներկայացված գնային տարբերակները կնքվելիք պայմանագրով սահմանված ապրանքների միավորների քանակի վրա և պարզ կդառնար, որ ընկերության կողմից նշվածը մեկ միավորի գին է, այլ ոչ թե ամբողջ պայմանագրի կատարման գին:

Բացի այդ, «Անտարես» ՍՊԸ-ն բազմաթիվ անգամ մասնակցել է ընթացակարգերին և պատշաճ կատարել է իր պարտավորությունները կապված գնումների գործընթացի հետ, ընկերությունը ներկայումս ևս չի հրաժարվում կատարել իր պարտականությունները, սակայն, հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ընկերությունը առաջին իսկ հնարավորության դեպքում հայտնել է Գնումների աջակցման կենտրոնին գնային առաջարկների մեջ տեղ գտած վրիպակի մասին՝ «Անտարես» ՍՊԸ-ն կարծում է, որ տվյալ իրավիճակում հաղթող մասնակից համարելով «Անտարես» ՍՊԸ-ին, ներկայացված մեկ միավորի գնային առաջարկի սահմաններում, ընդհանրապես կխախտվեն ընթացակարգի անցկացման բոլոր սկզբունքները, կխախտվեն մյուս բոլոր մասնակիցների արդար մրցույթի իրավունքը և մի շարք այլ իրավունքներ:

«Անտարես» ՍՊԸ-ն խնդրել է բավարարել բողոքը և դադարեցնել գնահատող հանձնաժողովի 2014թ. փետրվարի 26-ի N «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգի պայմանագրի կնքելու մասին որոշումը՝ 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների մասով և նշված չափաբաժիններում «Անտարես» ՍՊԸ-ի ներկայացված հայտը համարել հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ:

2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 11.03.2014թ. N 05/032-429 գրությամբ դիմել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 03.03.2014թ. «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 17.03.2014թ. N 28-16-373/1 գրությամբ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով www.armeps.am կայքի միջոցով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտարարել է «ՀՀ ԱՎԾ-ԱՊՁԲ-11/3-1» ծածկագրով գնման ընթացակարգ:

«ՀՀ ԱՎԾ-ԱՊՁԲ-11/3-1» ծածկագրով հրավերը 06.02.2014թ. ուղարկվել է գրանցված բոլոր մասնկիցներին և հիմք ընդունելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի 5.1 հավելվածը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից պահանջվել է գնային առաջարկը ներկայացնել պայմանագրի կատարման համար ընդհանուր գնով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը հայտնել է, որ մի շարք կազմակերպությունների հետ համատեղ ընթացակարգին մասնակցել է նաև «Անտարես» ՍՊԸ-ն, որը գնային առաջարկները ներկայացրել է 5.1 հավելվածին համապատասխան 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների համար:

«Անտարես» ՍՊԸ-ն 19.02.2014թ. գրությամբ դիմել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (հայտերի բացումը կատարվել է 18.02.14թ.), որով տեղեկացրել է, որ ընկերության կողմից գնային առաջարկը ներկայացվել է մեկ միավորի համար, այնինչ ներկայացված գնային առաջարկներում նշված է եղել պայմանագրի կատարման համար առաջարկվող գները:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 20.02.2014թ. թիվ 28-11-259 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը այն հարցով, թե արդյոք «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը ենթակա է քննարկման և կարող է հիմք հանդիսանալ գնային առաջարկներում ներկայացված գները որպես միավորի գներ ընդունելու համար:

Գնահատող հանձնաժողովի 26.02.2014թ. թիվ 1 որոշմամբ 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել «Անտարես» ՍՊԸ-ն:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.03.2014թ. թիվ 1.1/13.2/3054-14 գրությամբ ստացվել է պարզաբանում, որի համաձայն վերոնշյալ կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկները չեն կարող դիտարկվել որպես մեկ միավոր ապրանքատեսակի համար ներկայացված գներ,

քանի որ գնային առաջարկները ներկայացվել են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը առարկում է «Անտարես» ՍՊԸ-ի բողոքին և տեղեկացնում է, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը դադարեցրել է պայմանագրերի կնքումը մինչև խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

3. ԳԲԽ-08/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-08/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «Անտարես» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Բողոքաբեր ընկերություն) կողմից 03.03.2014թ. ներկայացված բողոքը, «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգին «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 17.03.2014թ. N 28-16-373/1 գրությունը և գրությամբ ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Անտարես» ՍՊԸ-ն:

«Անտարես» ՍՊԸ-ն 03.03.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ 18.02.2014թ. հայտ է ներկայացրել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգի N 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժիններին մասնակցելու համար, սակայն հայտով ներկայացված գնային առաջարկների մեջ տեղի է ունեցել վրիպում՝ գները

ներկայացվել են մեկ միավորի համար, այլ ոչ թե ամբողջ պայմանագրի կատարման համար:

«Անտարես» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 5.1 հավելվածով սահմանվել է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համադրելով վերոնշյալ իրավական նորմը և հրավերի մեջ համապատասխան նշված գնային առաջարկի վերաբերյալ պահանջը՝ «Անտարես» ՍՊԸ-ն գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հայտի մեջ գնային առաջարկը նշված լինի ոչ ամբողջ պայմանագրի կատարման համար սահմանված գումարով, ապա այդ հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեն անբավարար և մերժվեն:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 17.03.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 28-16-373/1 գրությամբ հայտնել է, որ գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով www.armeps.am կայքի միջոցով հայտարարվել է «ՀՀ ԱՎԾ-ԱՊՁԲ-11/3-1» ծածկագրով գնման ընթացակարգ: Պատվիրատուն, հիմք ընդունելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի 5.1 հավելվածը, մասնակիցներից պահանջել է գնային առաջարկը ներկայացնել պայմանագրի կատարման համար ընդհանուր գնով:

Պատվիրատուն հայտնել է, որ «Անտարես» ՍՊԸ-ն 19.02.2014թ. գրությամբ դիմել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը և տեղեկացրել, որ Ընկերության կողմից գնային առաջարկը ներկայացվել է մեկ միավորի համար, այնինչ ներկայացված գնային առաջարկներում նշված է եղել պայմանագրի կատարման համար առաջարկվող գները:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 20.02.2014թ. թիվ 28-11-259 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով տալ պարզաբանում «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության վերաբերյալ:

Պատվիրատուի 26.02.2014թ. գնահատող հանձնաժողովի թիվ 1 որոշմամբ 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել «Անտարես» ՍՊԸ-ն:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.03.2014թ. թիվ 1.1/13.2/3054-14 գրությամբ ստացել է պարզաբանում, որի համաձայն «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի կարող դիտարկվել որպես մեկ միավոր ապրանքատեսակի համար ներկայացված գին, քանի որ գնային առաջարկը ներկայացվել է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը, առարկում է «Անտարես» ՍՊԸ-ի բողոքին, ինչպես նաև տեղեկացնում է, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը դադարեցրել է պայմանագրերի կնքումը մինչև գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշման կայացնելը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 5.1 հավելվածով սահմանվել է, որ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ձևով՝ գնման առարկայի անվանումը, արժեք, ԱԱՀ, պայմանագրի կատարման համար առաջարկված գինը՝ տառերով և թվերով:

«Անտարես» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով սահմանել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն գնային առաջարկով նշված գների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2014թ. թիվ 1 որոշմամբ 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել «Անտարես» ՍՊԸ-ն:

«Անտարես» ՍՊԸ-ն 18.02.2014թ. գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ հայտնելով, որ «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊԶԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգի 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկների մեջ տեղի է ունեցել վրիպում՝ ընկերության կողմից գները

ներկայացվել են ապրանքի միավորի գնով՝ խնդրելով գնահատման ընթացակարգում հաշվի առնել այդ տեղեկությունը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, «Անտարես» ՍՊԸ-ի 18.02.2014թ. գրության վերաբերյալ հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում նշված է, որ գնային առաջարկը ներկայացվում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, ուստի այն չի կարող դիտարկվել որպես մեկ միավորի ապրանքատեսակի համար ներկայացված գին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից հաշված մինչև մեկ, իսկ ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում:

Գտնում ենք, որ Հանձնաժողովի կողմից «Անտարես» ՍՊԸ-ին Ընթացակարգի 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու գործընթացն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, քանի որ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկում 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժիններով գնման ենթակա ապրանքատեսակների մասով ներկայացված գները հանդիսացել են Ընթացակարգի տվյալ չափաբաժիններով ներկայացված նվազագույն գնային առաջարկ, իսկ Բողոքաբեր ընկերության կողմից

գները ապրանքի միավորի գնով ներկայացված լինելու վերաբերյալ գնային առաջարկով որևէ նշում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/3-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 26.02.2014թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 03.03.2014թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք մերժել այն:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ



Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ



Լ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի պետ



Ա. Հակոբյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-08/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար



Ռ. Մկրտչյան